

ԿԱՐԵՆ ԿԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՈՃԱԿԱՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱԿԲԵԹՈՒՄ» ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀՈԿՀ.
ՄԱՍԵՀՅԱՆԻ

Հայտնի է, որ բառապաշարը իմաստային ու ոճաբանական ողջ նրբերանգներով առավել բազմակողմանիորեն դրսևորվում է գեղարվեստական գրականության մեջ: Գրական ցանկացած երկ թարգմանելիս կարևորվում է բառերի ընտրությունը, թարգմանական համարժեքների ճշգրիտ կիրառումը:

Բառի ոճական բովանդակությունը պայմանավորող հիմնական հանգամանքներն են՝ իմաստը, կիրառության ոլորտը և ձևը (հնչյունական կազմը) (Ս.Ա.Սելբոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», 1984, էջ 43):

Բառիմաստով պայմանավորված ոճաարտահայտչական միջոցներից են հոմանիշները, հականիշները: Ստորև քննարկվում են թվարկած ոճաարտահայտչական միջոցների թարգմանության և ոճական կիրառության որոշ դեպքեր ինչպես բնագրում, այնպես էլ թարգմանության մեջ՝ դրանք լուսաբանելով առանձին օրինակներով:

ա) Հոմանիշ բառերի ոճական կիրառությունը և դրանց թարգմանությունը.

Հոմանիշները մերձիմաստ և նույնիմաստ լեզվական իրականություններ են, որոնք իրարից տարբերվում են ոճական կիրառությամբ (Ս.Ա.Սելբոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», 1984, էջ 68): «Մակբեթում» կա հոմանիշ բառերի և հոմանշային շարքերի կիրառության շուրջ 55 առանձին օրինակներ՝ ինչպես համագործածական, այնպես էլ խոսքային մակարդակի (անհատական) հոմանիշներ: Վերջիններս այն բառերն են, որոնք կիրառությունից դուրս հոմանշային կապերի մեջ չեն գտնվում, իմաստով բոլորովին տարբեր են (Ս.Ա.Սելբոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», 1984, էջ 71): Սակայն որոշակի համատեքստում ձեռք բերելով նոր իմաստային

նրբերանգներ կարող են հանդես գալ իբրև հոմանիշներ: Ահա անհատական հոմանիշների մի խումբ.

Malc. But I have none: the king-becoming graces.
As justice, verity, temperance, stableness,
Bounty, perseverance, mercy, lowliness,
Devotion, patience, courage, fortitude.

I have no relish of them; ...

(IV, 3)

Մալկ. Ես մեկն էլ չունեմ: Արքայավայել հատկություններից,
Ինչպես գթություն, ճշմարտության սեր, չափավորություն,
Անհողողողություն, քաղեսրտություն, հարատևություն,
Հեզամտություն, քաղեպաշտություն, համբերող ոգի,
Քաջաստություն, կամք, առողառություն,
Դրանցից իմ մեջ նշույլ իսկ չկա...

(IV, 3)

Հոմանիշների կիրառումը լավագույն միջոցն է խոսքը միօրինակությունից ազատելու, աշխուժություն և ռիթմ հաղորդելու համար: Հավատարիմ մնալով համարժեքության սկզբունքին՝ թարգմանիչը բնագրի ամեն մի հոմանիշ թարգմանել է հայերեն համարժեքով: Բառերի քանակը մնացել է նույնը, չի փոխվել նաև հոմանիշների խոսքիմաստային պատկանելիությունը: Կատարվել է միայն երկու հոմանիշների դիրքային փոփոխություն՝ հանգի, չափի նկատառումներով:

Եթե բերված օրինակում բառերն առանձին-առանձին դիտվեն (ինչպես օրինակ՝ քաջասրտություն-հեզամտություն, չափավորություն-քաղեսրտություն, անհողողողություն-գթություն և այլն), ապա կպարզվի, որ դրանք հոմանշային կապ չունեն, հեռու են իմաստային շփման եզրերից: Սակայն այս համատեքստում բառերը ձեռք են բերել որոշակի նրբիմաստներ, մտել են հոմանշային առնչությունների մեջ և ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ բացահայտել և նկարագրել առաքինի արքային վայել հատկությունները: Հոմանիշների շարքն օգտակար է ոչ միայն տվյալ համատեքստի, այլև ողջ գործի ոճական բովանդակության համար: Սրանով է բացատրվում նաև պիեսի բոլոր հատվածներում հոմանիշների և այլ ոճական հնարների առատ կիրառումը: Սրանով է հեղինակը հասնում պատկերի առավել ընդգրկուն նկարագրմանը: Բացի առանձին հոմանիշների կիրառման դեպքերից՝ կան նաև հոմանշային շարքերի բազում դեպքեր, երբ մեկից ավելի բառեր հանդես գալով որպես

հոմանշային շղթայի բաղկացուցիչ մասեր, անվանում և նկարագրում են միև-
նույն առարկան: Այս դեպքում հոմանիշները կարող են միմյանցից անջատվել
ստորակետով, կապվել և, ու շաղկապներով, ինչպես նաև այլ շաղկապներով ու
կապական բառերով: Հոմանիշների այդօրինակ կիրառությամբ շեշտվում է
նկարագրվող առարկան, երևույթը, հարստանում է խոսքի, նախադասության
պատկերայնությունը:

1Witch: ...Hang upon his penthouse lid
He shall live a man forbid
Weary sev'n-nights nine times nine,
Shall he dwindle, peak and pine. (I, 3)

Ա Վիուկ: Եվ նա կապի նգովված
Եվ հալումաշ կիհնի.
Ինը յոթնյակ, ինը հերթ,
Կշաղւառվի. Լտթնի: (I, 3)

Այս օրինակում հոմանշային շարք կազմող բառերն իմաստով շատ
մոտ (նույնանիշ) են, և իրենց ոճական կիրառությամբ մոտենում են «կրկնու-
թյուն» կոչվող ոճական հնարին, որտեղ իմաստն է կրկնվում, և ոչ թե բառը:
Բացի իմաստով շատ մոտ բառերից, հոմանշային շարք են կազմում նաև իմաս-
տով ոչ այնքան մոտ բառերը, որոնք պատկանում են հոմանիշների տարբեր
տեսակների (մակարդակների): Այստեղ արդեն հոմանիշներից յուրաքանչյուրը
կատարում է հստակ ոճական գործառույթ, այն է՝ նկարագրվող հասկացությու-
նը, երևույթը բացահայտել տարբեր տեսանկյուններից՝ դրան վերագրելով
տարբեր հատկություններ: Օրինակ՝

Malc. I grant him bloody.
Luxurious, avaricious, false.
Deceitful; sudden, malicious.
Smacking of every sin
That has a name. (IV, 3)

Մալկ. Խոստովանում եմ, որ նա առուներուշտ, աագշոտ, ազահ է,
խառդախ, խաբեքա, ցասկոտ, շառամիտ.
Որ բաժին ունի ամեն մի մեղքից, որ անուն ունի: (IV, 3)

Ընդգծված բառերը, բառային զույգերը իմաստով այնքան էլ մոտ չեն,
սակայն դրանք կարող են համատեղ կիրառվել՝ իրագործելով ոճական որոշա-
կի գործառույթ: Թարգմանության մեջ գործում է բառացի թարգմանության

սկզբունքը: Բառերի քանակը չի փոխվել, պահպանվել է հոմանիշների համասեռությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հոմանշային շարքի այն դրսևորումը, երբ շարքը կազմող յուրաքանչյուր հոմանիշ իմաստային ուժգնության առումով գերազանցում է նախորդին: Այս երևույթը հայտնի է աստիճանավորում (gradation) անվանումով և հիմնականում դիտվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում հասնել ոճաիմաստային որոշ թանձրության:

Macb.: But now I am cabined, cribbed,

confined, bound in

To saucy doubts and fears. -

(III, 4)

Մակբ.

Իսկ այժմ կապված եմ, կաշնանոված, գոգված,

Պատած ստահակ տարակույսներով ու երկյուղներով: (III, 4)

Այստեղ՝ կրավորական սեռի բայերով արտահայտված հոմանշային շարքում, ակնհայտ է բառերի միջև եղած իմաստային աստիճանական զարգացումը: Պատահական չէ, որ հոմանիշների իմաստային աստիճանավորում ստեղծելու նպատակով առավել հարմար է օգտագործել բայի, ստորոգյալի պաշտոնով հանդես եկող բառեր (ինչպես առաջին օրինակում): Օրինակ.

Macb.:

Come, seeling night,

Scarf up the tender eye of pitiful day,

And, with thy bloody and invisible hand

Cancel, and tear to pieces that great bond,

Which keeps me pale...

(III, 2)

Մակբ.

Աչքակապ գիշեր,

Եկ և պինդ կապիր գթոտ ցերեկվա կաթոգին աչքը

Եվ քո արյունոտ և անտես ծեռքով

Ետ առ և ճոճ ու պատառոտի՛ր այն մեծ մուրհակը,

Որ պահում է ինձ այսպես գունաթափ:

(III, 2)

Այստեղ ետ առ-ճոճ-պատառոտի՛ր հոմանշային շարքում առկա է աստիճանավորումը իմաստային տեսակետից: Պատառոտի՛ր բառն իմաստով, անշուշտ, առավել ուժեղ է, քան նախորդ երկու հոմանիշները: Նույն լեզվական երևույթը առկա է նաև բնագրում. թարգմանության մեջ, սակայն, տեղի է ունեցել հոմանշային շարքի բառի ավելացում. բնագրի երկու բառի կողքին երրորդ՝ ճոճ բառն է, որը թե դիրքային, թե՛ իմաստային առումով հանդես է եկել որպես կապող օղակ ետ առ և պատառոտի՛ր բառերի միջև: Սա, թերևս, պետք է վերա-

զրել թարգմանչի ոճական զգացողությանը թարգմանության բովանդակության, հանգի, վանկերի քանակի համապատասխանության և ճշտության պահանջով:
բ) *Հակամիշ բառերի ոճական կիրառությունը և դրանց թարգմանությունը.*

Հակամիշներն այնպիսի բառեր են, որոնց արտահայտում են հակադիր հասկացություններ (Ս.Ա.Մելքոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», 1984, էջ 82): «Մակբեթում» առկա է հակամիշ բառերի օգտագործման մոտ 70 օրինակ, որի մեջ ընդգրկված են հակամիշ բառերի տարբեր տեսակներ: Ինչպես հոմանիշները, այնպես էլ հակամիշները, լինում են համագործածական և անհատական: Հակամիշների ոճական արտահայտչականության զլխավոր նախապայմանը դրանց միասնաբար կիրառությունն է: Հակամիշների ոճական արժեքի հիմքը իմաստային հակադրությունն է: Օրինակ՝

Macd.: What three things does drink especially provoke?

Port: Marry. Sir, nose-painting, sleep and urine: Lechery, Sir, it provokes and unprovokes: it provokes the desire, but it takes away the performance:

Therefore, much drink may be said to be an equivocator with lechery: it makes him and it mars him: it sets him on, and it takes him off: it persuades him, and disheartens him, makes him stand to, and not stand to... (II, 3)

Սակդոժ. Որո՞նք են այդ երեք բաները, որ խմիչքը հատկապես զրգռում է: Ղռնապան. Սիւս որոնք են, պարոն. քթի կարմրություն, քուն և մեզ: Ինչ վերաբերում է անառակության, պարոն, խմիչքը թե՛ զրգռում է, թե՛ եւ է պահում. զանկությունը զրգռում է, բայց կատառումն առնելում է: Ուրեմն կարելի է ասել, թե խմիչքը անառակության հետ երկերեսանություն է անում. ստեղծում է և փչացնում, գառնեցնում է և քնեցնում, դողում է և միատեցնում: (II, 3)

Բնագրում հեղինակը հակադրության է համել տարբեր եղանակներով. մի դեպքում միևնույն արմատն ունեցող բառին ավելացնելով սը ժխտական նախածանցը, մեկ այլ դեպքում՝ տարբեր իմաստ ունեցող կայուն բառակապակցությունների (set-phrases) հակադրմամբ (to set on-to take off), մեկ թարգմանության մեջ բացակայում է բնագրի հականշային վերջին գույգը: Պահպանվել է հականիշ բառերի խոսքիմասային պատկանելությունը: Provokes and unprovokes միևնույն արմատն ունեցող հականշային գույգը հայերենում հանդես է եկել երկու տարբեր բառերով՝ զոռռում է, եւ է պահում: Այստեղ կա

նաև խորքային հակադրության օրինակ, երբ հակադրվում են ոչ միայն հականիշ բառերն, այլ նաև դրանց լրացումները, ինչպես օրինակ it provokes the desire, but it takes away the performance – գանկությունը գրգռում է, բայց կատառումն աղգեում է: Հականշային կապի մեջ են դրված ոչ միայն գրգռում է - աղգեում է բառային զույգերը, այլ նաև դրանց լրացումները՝ գանկությունը - կատառումն: Ստեղծում է և փչացնում, ցաղթեցնում է և քնեցնում, դողում է և վհատեցնում հականշային զույգերի իմաստային հակադրմամբ, դրանց ոճական նպատակներով կիրառության արդյունքում ի ցույց է դրվել խմիչքի տարաբնույթ ազդեցության հնարավորությունը մարդու վրա:

խորքային հակադրության մեկ օրինակ ևս.

Macb: ...Light thickens; and the crow
Makes wing to the rooky wood;
Good things of day begin to droop and drowse.
Whiles night's black agents to their preys do rouse. (III, 2)

Մակբ. ...Թխվում է լույսը,
Թռչում է ագռավն իր թռռատեղին մութ անտառի մեջ:
Ցեղեկվա բուրդ քառի բանեղ սմբում են, քմռում.
Այնինչ գիշերվա սև գործիչները ոտքի են կանգնում
եվ խուտվում են դեպ իրենց որսը: (III, 2)

Այս հատվածում կա ոչ միայն առանձին բառերի, այլև առանձին ամբողջական նախադասությունների խորքային հակադրություն: Ցեղեկվա քառի բանեղ հակադրվում են գիշերվա սև գործիչների հետ, սմբում են, քմռում բառերը՝ ոտքի են կանգնում և խուտվում են բառերի հետ: Հականշային զույգեր կազմող բառերն առանձին-առանձին վերցրած (օրինակ՝ բարի-սև, բաներ-գործիչներ), այն տպավորությունն է ստեղծում, թե դրանք միմյանց հետ հականշային կապի մեջ չեն գտնվում: Իրոք, կիրառությունից դուրս դրանք հականիշներ կարող են և չլինել, սակայն համատեղ գործածության դեպքում որոշակի հստակ համատեքստում դրանք մտնում են հականշային կապերի մեջ և ոճական ու լեզվական տեսանկյունից այդ կապը բավարար չափով հիմնավոր է: Լեզվաոճական մույն երևույթն առկա է նաև բնագրում: Good-black, things-agents հականիշ զույգերը միայն կիրառության ներսում կարող են հականշային ընդհանուր եզրեր ունենալ, մտնել հականշային առնչությունների մեջ, սակայն կիրառությունից դուրս good բառի բուն հականիշը bad –ն է, իսկ black-ինը

white-ը: Այն ընդհանուր գործոնը, որ թույլ է տալիս այս երկու բառերը կիրառության ներսում դիտել որպես հակաճիշդներ, այդ երկու բառերի արտահայտած իմաստային նրբերանգների հակադրությունն է: Black-սև բառը հիմնականում ունի «տխուր, սուգ, վատ» իմաստը: Ոճարտահայտչական առումով հակաճիշդ բառերի կիրառության արդյունքում ստացվում է երկու հակադիր հասկացությունների ճշգրիտ նկարագրություն: Ցեռենին բնորոշ է լույսը, բարությունը, անմեղությունը, այնինչ Գիշերին՝ մութը, խավարը, անհայտ ու սև գործերը, մարդասպանությունն ու խարդավանքը:

Թարգմանիչն օգտվել է բառացի թարգմանության սկզբունքից, իհարկե որոշ վերապահումով: Հակաճիշդ բառերի խոսքիմասային պատկանելիությունը պահպանվել է: Կատարվել է միայն հետևյալ փոփոխությունը. բնագրի rouse արթնացնել, զարթեցնել բայը հանդես է գալիս երկու բառով՝ ոտթի են կանգնում և խոտվում են, ենթադրում ենք, որ դա արվել է նախորդ տողի՝ սմբում են, թմռում բառերի հետ հակաճիշդային մեկական զույգ կազմելու նպատակով: Թարգմանության մեջ կա մի հատված, ուր թարգմանիչը հակաճիշդները վերստեղծել է ոչ թե երկու տարբեր բառերով, ինչպես դա արված է բնագրում, այլև միևնույն բայի երկու տարբեր սեռերի՝ ներգործական և կրավորական սեռերի հակադրությամբ:

2 Witch: When the hurlybury's done,

When the battle's lost and won.

(I, 1)

Բ Վիուկ: Երբ թոհուրոհն ավարտվի,

Մեկը հաղթի, մյուսն հաղթվի:

(I, 1)

Բնագրի իմաստով հակադիր երկու տարբեր բառերը՝ համագործածական հակաճիշդներ են՝ lost-won - հաղթել-պարտվել, իսկ թարգմանության մեջ հակադրությունը վերարտադրվել է սեռերի օգնությամբ: Հակադրություն ստեղծելու մյուս միջոցը օգտիմորոնն է, որ նույնպես առկա է «Մակբեթում»: Օքսիմորոնը երկու բառերի կապակցություն է (հիմնականում ածականի և գոյականի կամ մակբայի և ածականի), որտեղ երկու բաղադրիչների իմաստները չեն համընկնում իմաստով հակադիր լինելու պատճառով (I.R. Galperin "Stylistics" Moscow, 1981, p. 162): Այս ոճական հնարի օգտագործման հիմնական նպատակը խոսքին երգիծական ուղղվածություն հաղորդելն է, թեպետ լինում են

նաև այնպիսի դեպքեր, երբ օքսիմորոնի մեջ բացակայում է այն: «Մակբեթում» կա հակասության մի քանի դեպք.

Macd.: I know this is a joyful trouble to you:

But yet 't is one.

(II, 3)

Մակդ. Գիտեմ, ծեղ համար դա շատ հաճելի մի նեղություն է,
 Բայց նեղություն է:

(II, 3)

Այստեղ հակադրված են ոչ միայն բառերը, այլև բովանդակությունը. պարզ է, որ նեղությունը չի կարող հաճելի բան լինել, և հակառակը, հաճելին նեղություն լինել: Joyful trouble — օքսիմորոնը թարգմանվել է նույնությամբ:

Չետևաբար Մակբեթի թարգմանության մեջ բնագրի հոմանիշ բառերն ու հոմանիշային շարքերն հիմնականում վերստեղծվել են համարժեք թարգմանության սկզբունքով, բացառությամբ մի քանի առանձին դեպքերի, հոմանիշ բառերի քանակը և խոսքիմասային պատկանելիությունը մնացել է նույնը: Բնագրի հոմանիշային աստիճանավորումը վերադասակարգելու նպատակով թարգմանիչը օգտվել է ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռի բայերից: Ամբողջությամբ վերստեղծվել է նաև բնագրի հոմանիշ բառերի լեզվաոճական և պատկերային հիմքը:

Բնագրի հականիշ բառերը հիմնականում պահպանել են իրենց ոճական երանգավորումը: Առանց իմաստային և ոճական կորուստների վերստեղծվել են նաև խորքային հակադրությունները ըստ համարժեք թարգմանության սկզբունքի: Օքսիմորոնները, որոնք դասվում են դժվար թարգմանվող լեզվական իրողությունների թվին, նույնությամբ են հանդես գալիս:

Գրականության ցանկ

1. William Shakespeare "Two Tragedies" (The Tragical History of Hamlet, Prince of Denmark; Macbeth), Moscow, 1985.
2. I. R. Galperin "Stylistics", Moscow, 1981.
3. Վ. Շեքսպիր «Մակբեթ», Երևան, 1971.
4. Ս. Մելքոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», 1984.
5. Է. Աղայան «Ընդհանուր և հայկական բառագիտություն», 1984.
6. Ս. Էլոյան «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն», 1986: